ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՈՐՈՇՈՒՄ

Գանգատ թիվ 13343/15

Արգիշտի ԿԻՎԻՐՅԱՆՆ ընդդեմ Հայաստանի

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Առաջին բաժանմունք), 2019 թվականի հունիսի 18-ին հանդես գալով Կոմիտեի հետեւյալ կազմով՝

Քրշիշթոֆ Վոյտիչեկ [Krzysztof Wojtyczek]՝ *Նախագահ*,

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan]

Պաուլին Կոսկելո [Pauliine Koskelo]՝ *դատավորներ*,

եւ Ռենատա Դեգեներ [Renata Degener]՝ *Բաժանմունքի քարտուղարի տեղակալ*,

հաշվի առնելով 2015 թվականի փետրվարի 23-ին ներկայացված վերոնշյալ գանգատը,

հաշվի առնելով գործը բարեկամական ճանապարհով կարգավորելու վերաբերյալ պաշտոնական հայտարարությունները,

անցկացնելով խորհրդակցություն, կայացրեց հետեւյալ որոշումը.

ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Դիմումատուն՝ պրն Արգիշտի Կիվիրյանը, Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, որը ծնվել է 1977 թվականին եւ ապրում է Երեւանում: Նրան

Դատարանում ներկայացրել են Երեւանում գործող իրավաբաններ տկն Լ.Սահակյանը եւ պրն Ե.Վարոսյանը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը (Կառավարություն) ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Ե.Կիրակոսյանը:

Դիմումատուն Կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն բողոքել է իր հանդեպ ենթադրյալ վատ վերաբերմունքի եւ արդյունավետ քննություն չիրականացնելու վերաբերյալ:

2019 թվականի մարտի 15-ին եւ 2019 թվականի փետրվարի 15-ին Դատարանը ստացել է կողմերի կողմից ստորագրված՝ գործը բարեկամական ճանապարհով կարգավորելու վերաբերյալ հայտարարություններ, համաձայն որոնց դիմումատուն համաձայնել է հրաժարվել Հայաստանի դեմ հետագա պահանջներից այն փաստերի առնչությամբ, որոնք հիմք են սույն գանգատի համար՝ ցանկացած նյութական եւ ոչ նյութական վնաս, ինչպես նաեւ ծախսերն ու ծախքերը հատուցելու համար Կառավարության կողմից իրեն 9 000 եվրո վճարելու պարտավորության դիմաց, որը կփոխարկվի ՀՀ դրամով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով, եւ ազատված կլինի գանձման ենթակա ցանկացած հարկից: Այն ենթակա է վճարման Դատարանի կողմից կայացված որոշման մասին ծանուցելուց հետո երեք ամսվա ընթացքում: Այս գումարը նշված եռամսյա ժամկետում չվճարելու դեպքում Կառավարությունը պարտավորվում է այդ ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը վճարել այդ գումարի նկատմամբ հաշվարկված պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ: Վճարումը համարվում է գործի վերջնական լուծում:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

Դատարանը հաշվի է առնում կողմերի միջեւ գործը բարեկամական ճանապարհով կարգավորելու վերաբերյալ ձեռք բերված համաձայնությունը: Այն բավարար է համարում, որ համաձայնությունը հիմնված է Կոնվենցիայով եւ դրան կից արձանագրություններով սահմանված՝ մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի հիման վրա, եւ որեւէ պատճառ չի տեսնում գանգատի հետագա քննությունն արդարացնելու համար: Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է գործը հանել քննվող գործերի ցուցակից:

Այս հիմնավորմամբ Դատարանը միաձայն՝

*Որոշում է* գանգատը հանել քննվող գործերի ցուցակից՝ Կոնվենցիայի 39-րդ հոդվածի համաձայն:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2019 թվականի հուլիսի 11-ին:

| | |
|---|---|
| Ռենատա Դեգեներ | Քրշիշթոֆ Վոյտիչեկ |
| Քարտուղարի տեղակալ | Նախագահ |